

Կ-273-09.09.2019,21.10.2019-SՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-280-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 4.1-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

« 4.1 Սույն օրենսգրքով իրական սեփականատերերի հայտարարագրի կամ իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունների վերաբերյալ քաղվածք ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց դեպքում իրական սեփականատերերի հայտարարագիր լրացնելիս իրական սեփականատեր են համարվում նաեւ տվյալ ընկերության կառավարման միանձնյա եւ կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողով, խորհուրդ եւ գործադիր մարմին) անդամ ֆիզիկական անձինք և իրական սեփականատերերի մասով օրենսդրությամբ սահմանված իրավական կարգավորումները տարածվում են նրանց վրա»:

2. 32-րդ շարադրել նոր խմբագրությամբ.

«32) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերի փաթեթ.»:

Հոդված 2. Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 49-րդ եւ 50-րդ կետերով.

«49) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվություն՝ տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կամ կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով տվյալ օբյեկտի կառուցման տարածքի սահմաններում ընդերքի տեղամասից հանույթ կատարելու իրավունք.

50) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթ՝ տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կամ կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման տարածքից օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների դուրս բերումը՝ ընդերքից»:

Հոդված 3. Օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 22-րդ եւ 23-րդ կետերով.

«22) ընդերքօգտագործման ոլորտի վերաբերյալ վարչական ռեգիստրների վարման համար վարչական վիճակագրական «Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» (տարեկան), «Երկրաբանական ուսումնասիրությունների կատարման մասին» (եռամսյակային), «Օգտակար հանածոների կորզումն արդյունահանման ժամանակ» (տարեկան) եւ «Օգտակար հանածոների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների եւ արտադրական լցակույտերի համալիր օգտագործման մասին» (տարեկան) հաշվետվությունների ձեւերի, դրանց լրացման հրահանգների եւ ներկայացման կարգի սահմանում:

23) հանքային ջրերի հանքավայրերի հանքային ջրի շահագործական պաշարների ողջամիտ եւ համալիր օգտագործման սկզբունքից ելնելով օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված պաշարների սահմաններում տրամադրել ընդերքօգտագործման իրավունք մեկ կամ ավելի ընդերքօգտագործողներին:»:

Հոդված 4. Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի`

1. 2-րդ կետում «վկայականի պատճենը» բառերը փոխարինել «համարը» բառով:
2. 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
3. 5-րդ կետում «ծրագիրը» բառից հետո լրացնել «` սույն օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան» բառերը:
4. 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենսգրքի 36-րդ հոդվածի`

1. 2-րդ մասը լրացնել նոր 4-րդ կետով.

«4) ընդերքի այն տեղամասի նկարագրությունը, որտեղ ուսումնասիրություն իրականացնելու համար ներկայացվել է դիմումը, եւ ընդերքի այդ տեղամասի հատակագիծը` օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորման վկայական ստացած անձի կողմից տրված ծայրակետային կոորդինատներով` դիմումը ներկայացնելուն նախորդող 6 ամսվա դրությամբ:

Հոդված 6. Օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի`

1. 1-ին կետում «իրավաբանական անձի դեպքում» բառերը հանել, իսկ «վկայականի պատճենը» բառերը փոխարինել «համարը» բառով:
2. 4-րդ եւ 6-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենսգրքի 39-րդ հոդվածի`

1. 2-րդ մասը լրացնել նոր 3-րդ կետով.

«3) ընդերքի հայցվող տեղամասի ընդհանուր եւ երկրաբանական նկարագրությունները՝ երկրաբանական քարտեզով, հատակագիծը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորման վկայական ստացած անձի կողմից տրված ծայրակետային կոորդինատներով՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 6 ամսվա դրությամբ:»:

2. Ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասի 1-ին կետը:

Հոդված 8. Օրենսգրքի 40-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի «10-օրյա» բառերը փոխարինել « 20 օրվա» բառերով, իսկ «մինչեւ 30-օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 30 աշխատանքային օրվա» բառերով,

3-րդ մասի «մինչեւ 30-օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 30 աշխատանքային օրվա» բառերով,

3. 4-րդ մասի «դիմումի գրանցման օրվանից հետո՝ մինչեւ 60-օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 20-օրվա» բառերով:

4. 6-րդ մասում «լիազոր մարմինը 10-օրյա» բառերը փոխարինել «լիազոր մարմինը 20-օրվա» բառերով:

5. 7-րդ մասի 4-րդ եւ 51-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետերից հանել «համառոտ» բառը:

Հոդված 9. Օրենսգրքի 42-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում «հետո» բառից հետո լրացնել «20 օրվա ընթացքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք կրողի ներկայացրած դիմումի հիման վրա» բառերը, իսկ «հանքարդյունահանման» բառը փոխարինել «արդյունահանման» բառով:

2. 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1-ին մաս.

«2.1 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող անձը կարող է ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ, դիմել լիազոր մարմին օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու համար:»:

3. Հոդվածը նոր 9-րդ մասով.

«9. Սույն հոդվածի 1-ին եւ 4-7-րդ մասերով սահմանված պահանջները չեն տարածվում սույն հոդվածի 2-րդ մասի նկատմամբ:»:

Հոդված 10. Օրենսգրքի 46-րդ հոդվածի`

1. 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) լիազոր մարմնին տեղեկացնել երկրաբանական ուսումնասիրության թույլտվությամբ չտրամադրված` նոր հայտնաբերված օգտակար հանածոների մասին, դրանց հայտնաբերումից հետո` 14 օրվա ընթացքում.»:

2. 2-րդ մասը լրացնել նոր 8-րդ կետով .

«8) լիազոր մարմնին ներկայացնել վարչական վիճակագրական «Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» (տարեկան) եւ «Երկրաբանական ուսումնասիրությունների կատարման մասին» (եռամսյակային) հաշվետվությունները:»:

Հոդված 11. Օրենսգրքի 47-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով.

«2. Երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ փորձնական հանույթի ֆիզիկական ծավալները սահմանում է լիազոր մարմինը :»:

Հոդված 12. Օրենսգիրքը լրացնել նոր 48.2-րդ, 48.3-րդ, 48.4-րդ եւ 48.5-րդ հոդվածներով.

« Հոդված 48.2. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության տրամադրումը եւ ժամկետները

1. Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի մեկանգամյա թույլտվությունը տրվում է տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կառուցման նախագծերում նախատեսված օգտակար հանածոյի հանույթի համար նախատեսված ժամկետում, բայց ոչ ավել քան 1 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ 1 տարի ժամկետով` մինչեւ կառուցման նախագծի ժամկետի ավարտը:

2. Ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի մեկանգամյա թույլտվություն ունեցող անձը կարող է ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի մեկանգամյա թույլտվության գործողության ժամկետի ավարտից երեք ամիս առաջ, դիմել լիազոր մարմին` ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի մեկանգամյա թույլտվության ընդերքի տեղամասի նկատմամբ մեկանգամյա թույլտվության ժամկետը երկարաձգելու համար: Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 4-րդ եւ 6-րդ մասերով սահմանված կանոնները:

3. Տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կառուցման թույլտվություն ունեցող իրավաբանական անձը ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի մեկանգամյա թույլտվություն ստանալու համար դիմումը լիազոր մարմին է ներկայացնում տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ

թունելների կամ ջրամբարների կառուցման նախագծերը հաստատող համապատասխան մարմնի միջոցով:

4. Դիմումում նշվում կամ դրան կից ներկայացվում են՝

1) իրավաբանական անձի պետական գրանցման համարը.

2) ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի ընդերքի տեղամասի օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորման վկայական ստացած անձի կողմից տրված ծայրակետային կոորդինատներով՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 6 ամսվա դրությամբ:

3) հանույթի ծավալը, նախատեսվող ժամկետը.

4) տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կառուցման նախագծերի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» օրենքի համաձայն ստացած Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը:

5. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության ձեւը եւ տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը:

6. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության դիմումը մերժվում է, եթե՝

1) ոչ մետաղական օգտակար հանածոները հաշվառված է օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում,

2) դիմումին կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են.

3) դիմումում նշված հանույթի ծավալները չեն համապատասխանում տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կառուցման նախագծերով համար տրված թույլտվությամբ սահմանված հանույթի ծավալներին.

4) ընդերքի այն տեղամասը, որի համար դիմումատուն դիմել է, հանդիսանում է ռադիոակտիվ հումքի երեսակման տեղամաս.

5) իրավունքի տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի պահանջներին:

7. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հոդվածի 4-րդ մասի պահանջներին, ապա լիազոր մարմինը 10-օրվա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝

10-օրվա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

8. Սույն հոդվածը չի տարածվում կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի դեպքերի վրա:

Հոդված 48.3. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության տրամադրումը եւ ժամկետները

1. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության ձեւը, տրամադրման կարգը, ընդերքի տրամադրման պայմանները եւ հանույթի տնօրինման պայմանները սահմանում է կառավարությունը:

2. Կարելորագույն նշանակության ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվությունը տրվում է մինչեւ երեք տարի ժամկետով եւ կարող է երկարաձգվել յուրաքանչյուր երեք տարին մեկ՝ մինչեւ կառույցի նախագծային հզորության հասնելը:

3. Կարելորագույն նշանակության ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման թույլտվություն ունեցող իրավաբանական անձը ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի թույլտվություն ստանալու համար դիմումը ներկայացնում է լիազոր մարմնին:

4. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվություն հայցելու դիմումում նշվում եւ դրան կից ներկայացվում են՝

1) իրավաբանական անձի պետական գրանցման համարը.

2) ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի ընդերքի տեղամասի օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորման վկայական ստացած անձի կողմից տրված ծայրակետային կոորդինատներով՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 6 ամսվա դրությամբ.

3) եռամյա ժամկետում հանույթի ծավալը՝ տարեկան հանույթի առավելագույն ծավալի նշմամբ.

4) ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի կառավարության սահմանված կարգով տնօրինման առաջարկություններ՝ ըստ ծավալների եւ ժամկետների:

5) կարելորագույն նշանակության ստորգետնյա պահեստարանների կառուցման նախագծի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին»

օրենքի համաձայն ստացած Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը:

5. Կարելորագույն նշանակության ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասերով սահմանված կանոնները:

6. Շահագործվող կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների դեպքում սույն հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված պահանջը կիրառվում են շահագործվող կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման նախագծերի փոփոխության դեպքում:

7. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության դիմումը մերժվում է, եթե`

1) ոչ մետաղական օգտակար հանածոները հաշվառված է օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում.

2) դիմումին կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են.

3) թույլտվության տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում` Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի պահանջներին.

4) ընդերքի այն տեղամասը, որի համար դիմումատուն դիմել է, հանդիսանում է ռադիոակտիվ հումքի երեսակման տեղամաս.

5) դիմումում նշված հանույթի ծավալները չեն համապատասխանում օբյեկտի կառուցման կամ շահագործման նախագծով սահմանված ծավալների քանակին:

8. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հոդվածի 4-րդ մասի պահանջներին, ապա լիազոր մարմինը 10-օրվա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո` 10-օրվա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

Հոդված 48.4. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվություն ստացած անձի իրավունքները եւ պարտականությունները

1. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվություն ստացած անձն իրավունք ունի տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների շինարարության նախագծով հաստատված ծավալներին համապատասխան ընդերքի տեղամասից իրականացված ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթը օգտագործել միայն տվյալ կառույցի կառուցման համար:

2. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվություն ստացած անձը պարտավոր է՝

1) պահպանել մեկանգամյա թույլտվության եւ շինարարության նախագծով հաստատված պայմանները եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության եզրակացությամբ ամրագրված փորձագիտական պահանջները.

2) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության գործողության ժամկետի ավատից ոչ ուշ քան մեկ ամիս առաջ լիազոր մարմիններ կայացնել տեղեկատվություն հանույթի ծավալների վերաբերյալ:»:

Հոդված 48.5. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվություն ստացած անձի իրավունքներն ու պարտականությունները

1. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվություն ստացած անձն իրավունք ունի տնօրինելու կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման, ստեղծման կամ շահագործման ընթացքում առաջացած հանույթը.

2. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվություն ստացած անձը պարտավոր է՝

1) պահպանել հանույթի թույլտվության եւ շինարարության նախագծով հաստատված պայմանները եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության եզրակացությամբ ամրագրված փորձագիտական պահանջները.

2) պահպանել հանույթի տնօրինման սահմանված պայմանները եւ ծավալները.

3) յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ 30-օրվա ժամկետում, լիազոր մարմիններ կայացնել տեղեկատվություն հանույթի ծավալների եւ ծավալների տնօրինման վերաբերյալ:»:

Հոդված 13. Օրենսգրքի 49-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի՝

1) 1-ին կետից «իրավաբանական անձի դեպքում» բառերը հանել, իսկ «վկայականի պատճենը» բառերը փոխարինել «համարը» բառով.

2) 5-րդ կետում «նախագիծը» բառից հետո լրացնել « սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան» բառերը:

2. Ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 3-րդ եւ 7-րդ կետերը:

Հոդված 14. Օրենսգրքի 50-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը լրացնել նոր 2.1-րդ կետով.

«2.1) ընդերքի տեղամասի երկրաբանական նկարագրությունը, հանքավայրի երկրաբանական եւ հաստատված պաշարների բլոկավորման քարտեզները համապատասխան կտրվածքներով, հանքի շարժը ըստ տարիների ցուցադրող գծագրերը, հանքի գլխավոր հատակագիծը, հանքի շահագործման նախապատրաստման եւ արդյունահանման աշխատանքների ժամանակացույցը:»:

2. 1-ին մասը լրացնել նոր 9-րդ կետով.

«9) ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման դեպքում ռեժիմային դիտարկումներ, ջրային ռեսուրսներն սպառումից եւ աղտոտումից պահպանելու միջոցառումներ:»:

Հոդված 15. Օրենսգրքի 51-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի «10-օրյա» բառերը փոխարինել «40-օրվա» բառերով:

2. 3-րդ մասի «10-օրյա» բառերը փոխարինել «40-օրվա» բառերով:

3. 4-րդ մասի «100-օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 60 աշխատանքային օրվա» բառերով:

4. 4-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ.

«Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական

կառավարման լիազոր մարմնի հիմնավորված որոշմամբ փորձաքննության հիմնական փուլի ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանված ժամկետի կեսը չգերազանցող չափով, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ:»

5. 5-րդ մասի «100-օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 60 աշխատանքային օրվա, իսկ օրենքով սահմանված կարգով հիմնական փուլի երկարաձգման դեպքում երկարաձգված» բառերով:

6. 8-րդ մասի «դիմումի գրանցման օրվանից հետո՝ մինչև 180-օրյա» բառերը փոխարինել « մինչև 25-օրվա» բառերով:

7. 9-րդ մասի «օրվանից հետո՝ 10-օրյա» բառը փոխարինել «40-օրվա» բառերով:

Հոդված 16. Օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «եւ» բառից հետո լրացնել «(կամ)» բառը:

Հոդված 17. Օրենսգրքի 54-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասի՝

1) 1-ին կետում «տեսակները» բառը փոխարինել «եւ (կամ) ուղեկից բաղադրիչների անվանումները» բառերով.

2) 2-րդ կետում «լեռնահատկացման» բառից առաջ լրացնել «օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասի եւ,» բառերը.

3) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) օգտակար հանածոների պաշարների վերագնահատման կամ արդյունահանման, ընդերքօգտագործման թափոնների տեղադրման, ֆինանսական ներդրումների, օգտակար հանածոների արդյունահանման համալիրի ստեղծման աշխատանքների ենթադրվող ժամկետները՝ ըստ փուլերի, իսկ զուգահեռաբար լրահետախուզման աշխատանքներ կատարելու դեպքում՝ դրանց կատարման ժամանակացույցը.»,

4) 6-րդ կետում «հաստատված» բառից հետո լրացնել «եւ պետական հաշվեկշռում հաշվառված» բառերը:

2. 4-րդ մասը լրացնել նոր 12-րդ կետով.

«12) ընդերքօգտագործման թափոնների կառավարման եւ ընդերքօգտագործման թափոնների վերանշակման պլանների վերանայման արդյունքում փոփոխված պլանները, ինչպես նաեւ դրանց իրականացման փոփոխված ֆինանսական երաշխիքը ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին համաձայնեցման ներկայացնելու դրույթները:»:

3. Հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով.

«6. Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման դեպքում անհրաժեշտ է նախատեսել ռեժիմային դիտարկումներ, ջրային ռեսուրսները սպառումից եւ աղտոտումից պահպանելու միջոցառումներ:»:

Հոդված 18. Օրենսգրքի 59-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 6-րդ կետից հանել «երկրաբանական ուսումնասիրության» բառերը:
2. 3-րդ մասի 8-րդ կետում «անհրաժեշտ» բառը փոխարինել «ստացած» բառով:
3. 3-րդ մասի 15-րդ կետից հանել «արդյունահանում չիրականացնելու դեպքում դրանց» բառերը:
4. 3-րդ մասը լրացնել նոր 22-րդ եւ 23-րդ կետերով.

«22) լիազոր մարմինն ներկայացնել վարչական վիճակագրական «Օգտակար հանածոների կորզումն արդյունահանման ժամանակ» (տարեկան) եւ «Օգտակար հանածոների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների եւ արտադրական լցակույտերի համալիր օգտագործման մասին» (տարեկան) հաշվետվությունները:

23) հանքային ջրերի հանքավայրերի պաշարները արդյունահանման համար ընդերքօգտագործման իրավունք ստացած անձինք երաշխավորում են հանքավայրի նույն հորատանցքից կամ աղբյուրից այլ ընդերքօգտագործողի կողմից անարգել արդյունահանման աշխատանքների իրականացումը:»:

Հոդված 19. Օրենսգրքի 80-րդ հոդվածը լրացնել նոր 11-րդ մասով`

«11. Սույն օրենսգրքով սահմանված իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող առաջին քաղվածքի ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի հունվարի 30-ը»:

Հոդված 20. Օրենսգրքի ամբողջ տեքստում «աշխատանքային ծրագիր» եւ «աշխատանքային նախագիծ» բառերն իրենց հոլովածեւերով համապատասխանաբար փոխարինել «ծրագիր» եւ «նախագիծ» բառերով` իրենց հոլովածեւերով:

Հոդված 21.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում կառավարությունը սահմանում է ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության ձեւը եւ տրամադրման կարգը
3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում կառավարությունը սահմանում է Կարեւորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության ձեւը, տրամադրման կարգը, ընդերքի տրամադրման պայմանները եւ հանույթի տնօրինման պայմանները սահմանում է կառավարությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~Հոդված 7~~ Հոդված 7. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-280-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 4.1-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

« 4.1 Սույն օրենսգրքով իրական սեփականատերերի հայտարարագրի կամ իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունների վերաբերյալ քաղվածք ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց դեպքում իրական սեփականատերերի հայտարարագիր լրացնելիս իրական սեփականատեր են համարվում նաև տվյալ ընկերության կառավարման միանձնյա եւ կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողով, խորհուրդ եւ գործադիր մարմին) անդամ ֆիզիկական անձինք և իրական սեփականատերերի մասով օրենսդրությամբ սահմանված իրավական կարգավորումները տարածվում են նրանց վրա»:

2. 32-րդ կետն շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ շարադրել նոր խմբագրությամբ.

«32) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերի փաթեթ»:

~~Հոդված 2~~ Հոդված 2. Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 49-րդ եւ 50-րդ կետերով.

«49) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվություն՝ տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կամ կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով տվյալ օբյեկտի կառուցման տարածքի սահմաններում ընդերքի տեղամասից հանույթ կատարելու իրավունք.

50) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթ՝ տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կամ կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման տարածքից օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների դուրս բերումը՝ ընդերքից»:

~~Հոդված 3~~ Հոդված 3. Օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 22-րդ եւ 23-րդ կետերով.

«22) ընդերքօգտագործման ոլորտի վերաբերյալ վարչական ռեգիստրների վարման համար վարչական վիճակագրական «Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» (տարեկան), «Երկրաբանական ուսումնասիրությունների կատարման մասին» (եռամսյակային), «Օգտակար հանածոների կորզումն արդյունահանման ժամանակ» (տարեկան) եւ «Օգտակար հանածոների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների եւ արտադրական լցակույտերի համալիր օգտագործման մասին» (տարեկան) հաշվետվությունների ձեւերի, դրանց լրացման հրահանգների եւ ներկայացման կարգի սահմանում:

23) հանքային ջրերի հանքավայրերի հանքային ջրի շահագործական պաշարների ողջամիտ եւ համալիր օգտագործման սկզբունքից ելնելով օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված պաշարների սահմաններում տրամադրել ընդերքօգտագործման իրավունք մեկ կամ ավելի ընդերքօգտագործողներին»:

~~ՀԱՌՎԱԾ Հոդված 4.~~ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. 2-րդ կետում «վկայականի պատճենը» բառերը փոխարինել «համարը» բառով:
2. 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
3. 5-րդ կետում «ծրագիրը» բառից հետո լրացնել « սույն օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան» բառերը:
4. 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

~~ՀԱՌՎԱԾ Հոդված 5.~~ Օրենսգրքի 36-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասը լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ~~ նոր 4-րդ կետով.

«4) ընդերքի այն տեղամասի նկարագրությունը, որտեղ ուսումնասիրություն իրականացնելու համար ներկայացվել է դիմումը, եւ ընդերքի այդ տեղամասի հատակագիծը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորման վկայական ստացած անձի կողմից տրված ծայրակետային կողողինատներով՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 6 ամսվա դրությամբ:

~~ՀԱՌՎԱԾ Հոդված 6.~~ Օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. 1-ին կետում «իրավաբանական անձի դեպքում» բառերը հանել, իսկ «վկայականի պատճենը» բառերը փոխարինել «համարը» բառով:
2. 4-րդ եւ 6-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:

~~ՀԱՌՎԱԾ Հոդված 7.~~ Օրենսգրքի 39-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասը լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ~~ նոր 3-րդ կետով.

«3) ընդերքի հայցվող տեղամասի ընդհանուր եւ երկրաբանական նկարագրությունները՝ երկրաբանական քարտեզով, հատակագիծը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորման վկայական ստացած անձի կողմից տրված ծայրակետային կողողինատներով՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 6 ամսվա դրությամբ:»:

2. Ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասի 1-ին կետը:

~~ՀԱՌՎԱԾ Հոդված 8.~~ Օրենսգրքի 40-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի «10-օրյա» բառերը փոխարինել « 20 օրյա» բառերով, իսկ «մինչեւ 30-օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 30 աշխատանքային օրվա~~յս~~» բառերով,
2. 3-րդ մասի «մինչեւ 30-օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 30 աշխատանքային օրվա~~յս~~» բառերով,
3. 4-րդ մասի «դիմումի գրանցման օրվանից հետո՝ մինչեւ 60-օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 20-օրյա» բառերով:
4. 6-րդ մասում «լիազոր մարմինը 10-օրյա» բառերը փոխարինել «լիազոր մարմինը 20-օրյա» բառերով:
5. 7-րդ մասի 4-րդ եւ 51-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետերից հանել «համառոտ» բառը:

~~ՀԱՌԿԱԾ Հոդված 9.~~ Օրենսգրքի 42-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում «հետո» բառից հետո լրացնել «20 օրվա ընթացքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք կրողի ներկայացրած դիմումի հիման վրա» բառերը, իսկ «հանքարդյունահանման» բառը փոխարինել «արդյունահանման» բառով:

2. 2-րդ մասից հետո լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ 2 նոր 2.~~ 1-ին մաս.

«2.1 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող անձը կարող է ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ, դիմել լիազոր մարմին օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու համար:»:

3. Հոդվածը ~~լրացնել հետեւյալ բովանդակությամբ~~ նոր 9-րդ մասով.

«9. Սույն հոդվածի 1-ին եւ 4-7-րդ մասերով սահմանված պահանջները չեն տարածվում սույն հոդվածի 2-րդ մասի նկատմամբ:»:

~~ՀԱՌԿԱԾ Հոդված 10.~~ Օրենսգրքի 46-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի 2-րդ կետը ~~շարադրել հետեւյալ խմբագրությամբ~~ շարադրել նոր խմբագրությամբ.

«2) լիազոր մարմինն տեղեկացնել երկրաբանական ուսումնասիրության թույլտվությամբ չտրամադրված՝ նոր հայտնաբերված օգտակար հանածոների մասին, դրանց հայտնաբերումից հետո՝ 14 օրվա ընթացքում:»:

2. 2-րդ մասը լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ~~ նոր 8-րդ կետով .

«8) լիազոր մարմինն ներկայացնել վարչական վիճակագրական «Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» (տարեկան) եւ «Երկրաբանական ուսումնասիրությունների կատարման մասին» (եռամսյակային) հաշվետվությունները:»:

~~ՀԱՌԿԱԾ Հոդված 11.~~ Օրենսգրքի 47-րդ հոդվածը լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ~~ նոր 2-րդ մասով.

«2. Երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ փորձնական հանույթի ֆիզիկական ծավալները սահմանում է լիազոր մարմինը :»:

~~ՀԱՌԿԱԾ Հոդված 12.~~ Օրենսգրքը լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ~~ նոր 48.2-րդ, 48.3-րդ, 48.4-րդ եւ 48.5-րդ հոդվածներով.

~~«~~ ~~ՀԱՌԿԱԾ Հոդված 48.2.~~ *Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության տրամադրումը եւ ժամկետները*

1. Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի մեկանգամյա թույլտվությունը տրվում է տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կառուցման նախագծերում նախատեսված օգտակար հանածոյի հանույթի համար նախատեսված ժամկետում, բայց ոչ ավել քան 1 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ 1 տարի ժամկետով՝ մինչեւ կառուցման նախագծի ժամկետի ավարտը:

2. Ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի մեկանգամյա թույլտվություն ունեցող անձը կարող է ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի մեկանգամյա

թույլտվության գործողության ժամկետի ավարտից երեք ամիս առաջ, դիմել լիազոր մարմին՝ ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի մեկանգամյա թույլտվության ընդերքի տեղամասի նկատմամբ մեկանգամյա թույլտվության ժամկետը երկարաձգելու համար: Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 4-րդ եւ 6-րդ մասերով սահմանված կանոնները:

3. Տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կառուցման թույլտվություն ունեցող իրավաբանական անձը ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի մեկանգամյա թույլտվություն ստանալու համար **հայտը-դիմումը** լիազոր մարմին է ներկայացնում տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կառուցման նախագծերը հաստատող համապատասխան մարմնի միջոցով:

4. Դիմումում նշվում կամ դրան կից ներկայացվում են՝

1) իրավաբանական անձի պետական գրանցման համարը.

2) ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի ընդերքի տեղամասի օրենսդրությամբ սահմանված կարգով դրակավորման վկայական ստացած անձի կողմից տրված ծայրակետային կոորդինատներով՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 6 ամսվա դրությամբ:

3) հանույթի ծավալը, նախատեսվող ժամկետը.

4) տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կառուցման նախագծերի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» **««**օրենքի համաձայն ստացած Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը:

5. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության ձեւը եւ տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը:

6. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության **դիմումը հայտը** մերժվում է, եթե՝

1) ոչ մետաղական օգտակար հանածոները հաշվառված է օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում,

2) դիմումին կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են.

3) դիմումում նշված հանույթի ծավալները չեն համապատասխանում տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կառուցման նախագծերով համար տրված թույլտվությամբ սահմանված հանույթի ծավալներին.

4) ընդերքի այն տեղամասը, որի համար դիմումատուն դիմել է, հանդիսանում է ռադիոակտիվ հումքի երեսակման տեղամաս.

5) իրավունքի տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի պահանջներին:

7. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հոդվածի 4-րդ մասի պահանջներին, ապա լիազոր մարմինը 10-օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

8. Սույն հոդվածը չի տարածվում կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի դեպքերի վրա:

~~Հոդված 48.3~~ 48.3. *Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության տրամադրումը եւ ժամկետները*

1. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության ձեւը, տրամադրման կարգը, ընդերքի տրամադրման պայմանները եւ հանույթի տնօրինման պայմանները սահմանում է կառավարությունը:

2. Կարելորագույն նշանակության ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվությունը տրվում է մինչեւ երեք տարի ժամկետով եւ կարող է երկարաձգվել յուրաքանչյուր երեք տարին մեկ՝ մինչեւ կառույցի նախագծային հզորության հասնելը:

3. Կարելորագույն նշանակության ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման թույլտվություն ունեցող իրավաբանական անձը ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի թույլտվություն ստանալու համար ~~հայտը դիմումը~~ ներկայացնում է լիազոր մարմնին:

4. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվություն հայցելու դիմումում նշվում եւ դրան կից ներկայացվում են՝

1) իրավաբանական անձի պետական գրանցման համարը.

2) ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի ընդերքի տեղամասի օրենսդրությամբ սահմանված կարգով դրակավորման վկայական ստացած անձի կողմից տրված ծայրակետային կոորդինատներով՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 6 ամսվա դրությամբ.

3) եռամյա ժամկետում հանույթի ծավալը՝ տարեկան հանույթի առավելագույն ծավալի նշամբ.

4) ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի կառավարության սահմանված կարգով տնօրինման առաջարկություններ՝ ըստ ծավալների եւ ժամկետների:

5) կարելորագույն նշանակության ստորգետնյա պահեստարանների կառուցման նախագծի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ~~←~~ օրենքի համաձայն ստացած Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը:

5. Կարելորագույն նշանակության ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասերով սահմանված կանոնները:

6. Շահագործվող կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների դեպքում սույն հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված պահանջը կիրառվում են շահագործվող կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման նախագծերի փոփոխության դեպքում:

7. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության դիմումը մերժվում է, եթե՝

- 1) ոչ մետաղական օգտակար հանածոները հաշվառված է օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում.
- 2) դիմումին կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են.
- 3) թույլտվության տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի պահանջներին.
- 4) ընդերքի այն տեղամասը, որի համար դիմումատուն դիմել է, հանդիսանում է ռադիոակտիվ հումքի երեսակման տեղամաս.
- 5) դիմումում նշված հանույթի ծավալները չեն համապատասխանում օբյեկտի կառուցման կամ շահագործման նախագծով սահմանված ծավալների քանակին:

8. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հոդվածի 4-րդ մասի պահանջներին, ապա լիազոր մարմինը 10-օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

Հոդված ~~47.4~~ 48.4. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվություն ստացած անձի իրավունքները եւ պարտականությունները

1. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվություն ստացած անձն իրավունք ունի տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների շինարարության նախագծով հաստատված ծավալներին համապատասխան ընդերքի տեղամասից իրականացված ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթը ~~կարող է~~ օգտագործել միայն տվյալ կառույցի կառուցման համար:

2. Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվություն ստացած անձը պարտավոր է՝

1) պահպանել մեկանգամյա թույլտվության եւ շինարարության նախագծով հաստատված պայմանները եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության եզրակացությամբ ամրագրված փորձագիտական պահանջները.

2) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության գործողության ժամկետի ավատից ոչ ուշ քան մեկ ամիս առաջ լիազոր մարմնին ներկայացնել տեղեկատվություն հանույթի ծավալների վերաբերյալ:»:

Հոդված ~~47.4~~ 48.5. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվություն ստացած անձ~~ը~~ իրավունքներն ու պարտականությունները

1. Կարելորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվություն ստացած անձն իրավունք ունի՝

1) տնօրինելու կարելու ազույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման, ստեղծման կամ շահագործման ընթացքում առաջացած հանույթը.

2. Կարելու ազույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվություն ստացած անձը պարտավոր է՝

1) պահպանել հանույթի թույլտվության եւ շինարարության նախագծով հաստատված պայմանները եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության եզրակացությամբ ամրագրված փորձագիտական պահանջները.

2) պահպանել հանույթի տնօրինման սահմանված պայմանները եւ ծավալները.

3) յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ 30-օրյա ժամկետում, լիազոր մարմին ներկայացնել տեղեկատվություն հանույթի ծավալների եւ ծավալների տնօրինման վերաբերյալ:»:

~~ՀՈՂԱԿՑ~~ Հոդված 13. Օրենսգրքի 49-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի՝

16) 1-ին կետից «իրավաբանական անձի դեպքում» բառերը հանել, իսկ «վկայականի պատճենը» բառերը փոխարինել «համարը» բառով.

27) 5-րդ կետում «նախագիծը» բառից հետո լրացնել «՝ սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան» բառերը:

2. Ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 3-րդ եւ 7-րդ կետերը:

~~ՀՈՂԱԿՑ~~ Հոդված 14. Օրենսգրքի 50-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ նոր~~ 2.1-րդ կետով.

«2.1) ընդերքի տեղամասի երկրաբանական նկարագրությունը, հանքավայրի երկրաբանական եւ հաստատված պաշարների բլոկավորման քարտեզները համապատասխան կտրվածքներով, հանքի շարժը ըստ տարիների ցուցադրող գծագրերը, հանքի գլխավոր հատակագիծը, հանքի շահագործման նախապատրաստման եւ արդյունահանման աշխատանքների ժամանակացույցը:»:

2. 1-ին մասը լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ նոր~~ 9-րդ կետով.

«9) ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման դեպքում ռեժիմային դիտարկումներ, ջրային ռեսուրսներն սպառումից եւ աղտոտումից պահպանելու միջոցառումներ:»:

~~ՀՈՂԱԿՑ~~ Հոդված 15. Օրենսգրքի 51-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի «10-օրյա» բառերը փոխարինել «40-օրյա» բառերով:

2. 3-րդ մասի «10-օրյա» բառերը փոխարինել «40-օրյա» բառերով:

3. 4-րդ մասի «100-օրյա» բառերը փոխարինել «մինչեւ 60 աշխատանքային օրվա» բառերով:

4. 4-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ.

[«Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հիմնավորված որոշմամբ փորձաքննության հիմնական փուլի ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանված ժամկետի կետը չգերազանցող չափով, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ:»](#)

45. 5-րդ մասի «100-օրյա» բառերը փոխարինել «մինչև 60 աշխատանքային օրվա» բառերով:

56. 8-րդ մասի «դիմումի գրանցման օրվանից հետո՝ մինչև 180-օրյա» բառերը փոխարինել « մինչև 25-օրյա» բառերով:

6.7 9-րդ մասի «օրվանից հետո՝ 10-օրյա» բառը փոխարինել «40-օրյա» բառերով:

~~ՀԱԳՎԱԾ Հոդված 16.~~ Օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «եւ» բառից հետո լրացնել «(կամ)» բառը:

~~ՀԱԳՎԱԾ Հոդված 17.~~ Օրենսգրքի 54-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասի՝

1) 1-ին կետում «տեսակները» բառը փոխարինել «եւ (կամ) ուղեկից բաղադրիչների անվանումները» բառերով.

2) 2-րդ կետում «լեռնահատկացման» բառից առաջ լրացնել «օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասի եւ,» բառերը.

3) 4-րդ կետը [շարադրել նոր խմբագրությամբ](#) ~~շարադրել հետեւյալ խմբագրությամբ.~~

«4) օգտակար հանածոների պաշարների վերազնահատման կամ արդյունահանման, ընդերքօգտագործման թափոնների տեղադրման, ֆինանսական ներդրումների, օգտակար հանածոների արդյունահանման համալիրի ստեղծման աշխատանքների ենթադրվող ժամկետները՝ ըստ փուլերի, իսկ զուգահեռաբար լրահետախուզման աշխատանքներ կատարելու դեպքում՝ դրանց կատարման ժամանակացույցը.»

4) 6-րդ կետում «հաստատված» բառից հետո լրացնել «եւ պետական հաշվեկշռում հաշվառված» բառերը:

2. 4-րդ մասը լրացնել [հետեւյալ բովանդակությամբ](#) ~~նոր~~ 12-րդ կետով.

«12) ընդերքօգտագործման թափոնների կառավարման եւ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների վերանայման արդյունքում փոփոխված պլանները, ինչպես նաեւ դրանց իրականացման փոփոխված ֆինանսական երաշխիքը ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին համաձայնեցման ներկայացնելու դրույթները:»:

3. Հոդվածը լրացնել [հետեւյալ բովանդակությամբ](#) ~~նոր~~ 6-րդ մասով.

«6. Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման դեպքում անհրաժեշտ է նախատեսել ռեժիմային դիտարկումներ, ջրային ռեսուրսները սպառումից եւ աղտոտումից պահպանելու միջոցառումներ:»:

~~ՀԱԳՎԱԾ Հոդված 18.~~ Օրենսգրքի 59-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 6-րդ կետից հանել «երկրաբանական ուսումնասիրության» բառերը:
2. 3-րդ մասի 8-րդ կետում «անհրաժեշտ» բառը փոխարինել «ստացած» բառով:
3. 3-րդ մասի 15-րդ կետից հանել «արդյունահանում չիրականացնելու դեպքում դրանց» բառերը:
4. 3-րդ մասը լրացնել նոր 22-րդ եւ 23-րդ կետերով հետեւյալ բովանդակությամբ.

«22) լիազոր մարմնին ներկայացնել վարչական վիճակագրական «Օգտակար հանածոների կորզումն արդյունահանման ժամանակ» (տարեկան) եւ «Օգտակար հանածոների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների եւ արտադրական լցակույտերի համալիր օգտագործման մասին» (տարեկան) հաշվետվությունները:

23) հանքային ջրերի հանքավայրերի պաշարները արդյունահանման համար ընդերքօգտագործման իրավունք ստացած անձինք երաշխավորում են հանքավայրի նույն հորատանցքից կամ աղբյուրից այլ ընդերքօգտագործողի կողմից անարգել արդյունահանման աշխատանքների իրականացումը:»:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված 19. . Օրենսգրքի 80-րդ հոդվածը լրացնել նոր 11 մասով

«11. Սույն օրենսգրքով սահմանված իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող առաջին բաղվածքի ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի հունվարի 30-ը:»:

Հոդված 2019. Օրենսգրքի ամբողջ տեքստում «աշխատանքային ծրագիր» եւ «աշխատանքային նախագիծ» բառերն իրենց հոլովածեւերով համապատասխանաբար փոխարինել «ծրագիր» եւ «նախագիծ» բառերով՝ իրենց հոլովածեւերով:

~~ՀՈԴՎԱԾ~~ Հոդված-2120 Անցումային դրույթներ

1-1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում կառավարությունը սահմանում է ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկնագանյա թույլտվության ձեւը եւ տրամադրման կարգը

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում կառավարությունը սահմանում է Կարելտորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության ձեւը, տրամադրման կարգը, ընդերքի տրամադրման պայմանները եւ հանույթի տնօրինման պայմանները սահմանում է կառավարությունը

Ա Մ Փ Ո Փ Ա Յ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՂՎ-273-9.09.2019-SՀ-011/1) «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՂՎ-4-273¹-09.09.2019-SՀ-011/0) ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՂՎ-4-273²-09.09.2019-SՀ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	2.	3.	4.	5.	6.
1.	ՀՀ կառավարություն		Նախագծի առաջին էջի վերևի աջ անկյունում գրված «Նախագիծ» բառի բոլոր տառերն առաջարկում ենք գրել մեծատառերով: Նույնը վերաբերում է նաև Օրենքի նախագծի փաթեթում ներառված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերին:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասում փոփոխության փոխարեն կատարել լրացում՝ լրացվող կետով սահմանելով «շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ» հասկացությ ու նր:	Ընդունվել է, սակայն Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ի 32-րդ կետի սահմանման	Ընդունվել է

				անհրաժեշտությունը բխում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փոչձաքննության մասին» ՀՀ օրենքից և այն համապատասխանեցվել է նշյալ օրենքի 16-րդ հոդվածի պահանջներին:	
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 1-ին	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 32-րդ կետում «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել: Նույն առաջարկը վերաբերվում է նաև Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 48.2 -րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետին:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 11-րդ	Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 48.2-րդ հոդվածի 3-րդ եւ 6-րդ մասերում «հայտը» բառը փոխարինել «դիմումը» բառով: Նույն առաջարկը վերաբերվում է նաև Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 48.3-րդ հոդվածի 3-րդ մասին:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդվածի մասի և հոդվածի մասի 3-րդ կետ 1-ին 10-րդ 1-ին 15-րդ 1-ին	Նախագծի 1-ին հոդվածի, 10-րդ հոդվածի 1-ին մասի և 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «շարադրել հետեւյալ խմբագրությամբ» բառերն փոխարինել «շարադրել նոր խմբագրությամբ» բառերով: Նույնը վերաբերում է նաեւ Փաթեթում ներառված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածին:	Ընդունվել է	Ընդունվել է

6.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 2-րդ	Նախագծի 2-րդ հոդվածում և ամբողջ տեքստում «լրացնել հետևյալ բովանդակությամբ» բառերն փոխարինել «լրացնել նոր» բառերով: Նույնը վերաբերում է նաև Փաթեթում ներառված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածին:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 11-րդ	Նախագծի 11-րդ հոդվածով առաջարկվում է Օրենսգիրքը լրացնել նոր 48.2-րդ հոդվածով, որի 5-րդ մասով սահմանվում է. «Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության ձեւը եւ տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը»: Օրենսգրքի վերը նշված հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունում, ուստի առաջարկվում ենք Նախագծի անցումային դրույթներում նշել, թե ինչ ժամկետում է ընդունվելու դրանով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը: Նույնը վերաբերում է Նախագծի 11-րդ հոդվածով նախատեսված 48.3-րդ հոդվածի 1-ին մասին:	Ընդունվել է Նախագծի 20-րդ հոդվածով սահմանվել է ժամկետներ ենթաօրենսդրական ակտերի ընդունման համար:	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 11-րդ	Նախագծի 11-րդ հոդվածով նախատեսված Օրենսգրքի նոր 48.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1.Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվություն ստացած անձն իրավունք ունի տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների շինարարության նախագծով հաստատված ծավալներին համապատասխան ընդերքի տեղամասից իրականացված ոչ	Ընդունվել է Նախագծի լրամշակված տարբերակի 12-րդ հոդվածով նախատեսված Օրենսգրքի նոր 48.4-րդ հոդվածի 1-ին մասից հանվել է «կարող է»	Ընդունվել է

			մետաղական օգտակար հանածոյի հանույթը կարող է օգտագործել միայն տվյալ կառույցի կառուցման համար:»։ Վերը նշված հոդվածի 1-ին մասում միաժամանակ օգտագործվում է « իրավունք ունի » եւ « կարող է » եզրույթները: Ուստի, առաջարկում ենք խմբագրել նշված դրույթը:	բառը:	
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 11-րդ	Նախագծի 11-րդ հոդվածով նախատեսված Օրենսգրքի նոր 48.5-րդ հոդվածի վերնագրում «անձն» բառն առաջարկում ենք փոխարինել «անձի» բառով:	Ընդունվել է Նախագծի լրամշակված տարբերակի 12-րդ հոդվածում կատարվել համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
10.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 11-րդ	Նախագծի 11-րդ հոդվածով նախատեսված Օրենսգրքի նոր 48.2-րդ, 48.3-րդ, 48.4-րդ եւ 48.5-րդ հոդվածների համարներից առաջ մեծատառերով գրված «ՀՈԴՎԱԾ» բառը փոխարինել «Հոդված» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 11-րդ	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 48.5-րդ հոդվածի 1-ին մասը մեկ դրույթ է պարունակում, գտնում ենք, որ համարակալման կարիք չկա, ուստի առաջարկում ենք «1)» կետը հանել և դրույթը շարադրել 1-ին մասում:	Ընդունվել է	Ընդունվել է
12	Աժ պատգամավոր Վարազդատ Կարապետյան	Նախագծի հոդված 15-րդ	Առաջարկում ենք Նախագծի 15-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ «Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հիմնավորված որոշմամբ փորձաքննության հիմնական փուլի ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանված ժամկետի կեսը չզերազանցող չափով,	Ընդունվել է	Ընդունվել է

			բայց ոչ ավելի, քան մեկ անգամ:», որի նպատակն է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով փորձաքննական գործընթացի ժամկետի երկարաձգման դեպքում ընդերքօգտագործման իրավունքի վերաբերյալ որոշում կայացնելու համար սահմանված ժամկետը հնարավոր լինի երկարաձգել:		
13.	ՀՀ կառավարություն		Առաջարկում ենք նախագծի ամբողջ տեքստում «ՀՈԴՎԱԾ» բառը փոխարինել «Հողված» բառով, իսկ «աշխատանքային օրյա» բառերը փոխարինել «աշխատանքային օրվա» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
14.	ՀՀ կառավարություն	Նախագծի 18-րդ հոդված	Նախագծի 18-րդ հոդվածի վերնագիրը, այն է՝ «Անցումայն դրույթներ» բառերը, հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
15.	ՀՀ կառավարություն		Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի մեկանգամյա թույլտվության հասկացությունը հստակեցնել և սահմանել, որ տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կամ կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման ժամանակ նույն տարածքից իրականացված հանույթը օգտագործվելու է տվյալ կառույցի շինարարության համար :	Ընդունվել է	Ընդունվել է
16.	Աժ պատգամավոր		«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական	Ընդունվել է Նախագծի փաթեթից	Ընդունվել է

	Արտակ Մանուկյան		<p>իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթից հանել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, քանի որ վարչական վիճակագրական հաշվետվությունները չներկայացնելու համար լիազոր մարմինը իրավունք ունի տալ զգուշացում, իսկ զգուշացման պայմանները չկատարելու համար ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնել:</p>	<p>հանվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:</p>	
17.	<p>ԱԺ պատգամավոր Հայկ Գևորգյան</p>		<p>«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում անհրաժեշտ է հստակեցնել արդյոք տվյալ ընկերության կառավարման միանձնյա եւ կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողով, խորհուրդ եւ գործադիր մարմին) անդամ ֆիզիկական անձց վրա տարածվում է իրական սեփականատերերի համար օրենսդրական կարգավորումները, թե ոչ:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Օրենքի նախագծի 1-ին հոդվածով սահմանվել է, որ տվյալ ընկերության կառավարման միանձնյա և կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողով, խորհուրդ և գործադիր մարմին) անդամ ֆիզիկական անձանց վրա տարածվում են իրական սեփականատերերի մասով օրենսդրությամբ սահմանված իրավական կարգավորումները :</p>	<p>Ընդունվել է</p>

18.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 1-ին	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
19.	ՀՀ կառավարություն		«Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը լրացվել է նոր 19-րդ հոդվածով՝ համաձայն որի օրենսգրքով սահմանված իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող առաջին քաղվածքի ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի հունվարի 30-ը:	Ընդունվել է	Ընդունվել է